

Ժողովուրդ

159
(3009)

15 նոյեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

Է. Երեւան, Արուսյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՔՊ-Ե ԱՄԵՆ ԿԵՐՊ ՓՈՐՁՈՒՄ Է ՎԵՏԱԶԳԵԼ ԳՅՈՒՄՐՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նոյեմբերի 12-ի նիստում մի կողմից սկսվել է գրանցվել:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ երեքշաբթի օրը կայացած ՔՊ վարչության նիստում, որի ընթացքում Գյումրիում ստեղծված անիշխանության իրավիճակն է քննարկվել, Նիկոլ Փաշինյանը անակնկալ կերպով վարչության նիստին ներկա ՔՊ խմբակցության պատգամավոր, Գյումրու քաղաքապետի հավանական թեկնածու Կարեն Սարուխանյանին՝ իր համար վստահելի բժշկի եւ իր անվտանգության աշխատակցի ուղեկցությամբ թմրանյութի թեստ հանձնելու է ուղարկել:

Այս նիստից ավելի վաղ՝ նոյեմբերի 10-ին, հրապարակավ հայտնի դարձավ, որ թմրանյութ պահելու ու օգտագործելու կասկածանքով, ձերբակալվել են ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Կարեն Սարուխանյանի քեռու որդին՝ Վարուժ Խոջունյանը եւ նրա ընկերը՝ Գյումրու ավագանու ՔՊ խմբակցության անդամ Պարգե Ասրաբյանը: Նշվում է, որ Կարեն Սարուխանյանի քեռու որդին՝ Վարուժ Խոջունյանը, «Գյումրի» ԲԿ-ի մանկական բաժանմունքի տնտեսական աշխատակիցն է, նաեւ Գյումրու ՔՊ տարածքային կազմակերպության խորհրդի անդամ, եւ նա, որպեսզի ՔՊ-ի վրա հետք չթողնի, օրերս հայտարարեց, թե դուրս է գալիս իշխող կուսակցությունից:

Բայց շարունակվեց ՔՊ վարչության ուշագրավ նիստի մանրամասները: «Ժողովուրդ» օրաթերթին հաջողվեց պարզել, որ Փաշինյանն ինչ-որ օղակներով տեղեկություն է ստացել, որ Կարեն Սարուխանյանը եւս ինչ-ինչ առնչություն ունի թմրանյութերի հետ, դրա համար որոշել է անակնկալ կերպով, իր վստահելի մարդկանց միջոցով ճշտել իրականությունը:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրներն են փոխանցում՝ Սարուխանյանը բժշկի ու անվտանգության աշխատակցի հետ գնացել է, եւ ներկայանում այդպես էլ չեն իմացել, թե ինչ արդյունք է գրանցվել՝ հայտնաբերվել են թմրանյութի հետքեր, թե ոչ: Միայն հայտնի է, որ ՔՊ-ն ջանքեր է գործադրում՝ Գյումրիում ընտրությունները հետաձգելու ուղղությամբ:

ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Արուսյակ Զուլհալյանը, ով փորձում էր ծաղրել «Սրբազան շարժմանը»՝ ասելով. «Ամեն շարժվող բան չէ, որ շարժում է», «շարժվող» եկամուտներ է հայտարարագրել: Համաձայն 2023 թվականի նրա հայտարարագրի՝ Արուսյակ Զուլհալյանի հետ համատեղ բնակվում են 2 անձինք, որոնք աշխատում են ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանում դասախոս եւ լաբորանտորիայի վարիչ, վերջիններս ՔՊ-ական պատգամավորի ծնողներն են: Պատգամավորը անշարժ գույք եւ տրանսպորտային որեւէ միջոց չի հայտարարագրել: Սակայն հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված ֆինանսական հաշվետվությունից տեղեկանում ենք, որ Զուլհալյանն ունի հիփոթեքով բնակարան, որի մայր գումարի մնացորդը կազմել է 25 մլն 933 հազար դրամ: Բնակարանը գտնվում է Արաբկիր վարչական շրջանում՝ Մամիկոնյան փողոցում, որի մայր գումարը մարելու համար ՔՊ-ական պատգամավորը ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է 2 մլն 71 հազար դրամ: Զուլհալյանի պարտքային եւ այլ արժեթղթերը կազմել են 20 մլն 10 հազար դրամ: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 6 մլն դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 9 հազար ԱՄՆ դոլարից դարձել են 7 հազար դրամ, այն դեպքում, երբ պատգամավորը որեւէ ծախս սեփական հայտարարագրում չի ներկայացրել:



«Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները հաղորդում են, որ Անդրանիկ Քոչարյանը կրկին «կանչվել» է նոյեմբերի 12-ի ՔՊ վարչության նիստին՝ բացատրություններ տալու իր հրահրած ներքին խարդախության համար: Թեեւ ՔՊ-ականները, իրար հերթ չտալով, հերքում կամ կիսատ, վախկոհած ձեւակերպումներով են հաստատում իրենց ներթիմային տարածայնությունների մասին, այնուամենայնիվ, դրանք ավելի են խորանում, եւ «ծեր աղվես» որակման արժանացած տարեց ՔՊ-ական բեղերով պատգամավորը շարունակում է ինտրիգներ հյուսել թիմի ներսում: «Ժողովուրդ» օրաթերթն իր իրազեկ աղբյուրներից տեղեկացավ, որ վարչության վերջին նիստի ընթացքում ՔՊ վերնախավը փորձել է պարզաբանել, թե Անդրանիկ Քոչարյանն ինչու է վատաբանում Հրաչյա Հակոբյանին (վարչապետի աներորդուն), Սիսակ Գաբրիելյանին եւ այլ թեմի մյուս ներկայացուցիչներին՝ նրանց կապելով խաղաղությանը եւ թմրաբիզնեսով հարստացող գործարարների հետ՝ ասելով գործարարի «դեռ ցրողներ»: Հենց այս խոսակցություններն են պատճառ եղել, որ եւ Հրաչյա Հակոբյանը եւ Սիսակ Գաբրիելյանը կուսակցության վերնախավի մոտ բարձրացրել են երկու հարց. կամ Անդրանիկ Քոչարյանը պետք է ապացուցի իր ասածները, կամ պետք է պաշտոնազրկվի: Ու քանի դեռ երկուսից որեւէ մեկը տեղի չի ունեցել, Գյումրու ընտրությունների կազմակերպչական ու ՔՊ թեկնածու Կարեն Սարուխանյանի թմրանյութի թեստ հանձնելու հրահանգից զատ՝ քննարկվել է նաեւ Անդրանիկ Քոչարյանի ոչ թիմային վարքագիծը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ որպեսզի կողմնապահություն չդիտվի, վարչությունն այդ օրը դիրքորոշում չի հայտնել, այլ Նիկոլ Փաշինյանը փորձել է «խրատել» կողմերին եւ «ամոթանք տալ» անպատասխանատու պահվածքի, հայտարարությունների համար, եւ հարցը էլի մնացել է առկախված: Այնպես որ, հայտարարված «իրադարձ»-ը դեռ վերջնական չէ: Անդրանիկ Քոչարյանի պաշտոնանկության հարցը շարունակում է առաջնային մնալ ՔՊ օրակարգում: Նկատենք, որ 2021 թվականից ՔՊ-ական դարձած Քոչարյանին պաշտպանողների թիվը կուսակցությունում, խմբակցությունում օր օրի պակասում է:



Հեղափոխական իշխանիկները շարունակում են «նախկինների» գործողությունները. անգամ մանկապարտեզների սաների համար նախատեսված նվերների ձեւն ու որակը չի փոխվել: «Ժողովուրդ» օրաթերթը բաց աղբյուրներից տեղեկացավ, որ Երեւանի քաղաքապետարանը 2 մլն դրամ հատկացրել էր Աջափնյակ եւ 5 մլն դրամ էլ՝ Արաբկիր վարչական շրջանների մանկապարտեզների համար: Բացի այդ, քաղաքապետարանը Տարոն Մաթեոսյան ԱԶ-ի հետ թվով 5 պայմանագիր է կնքել, որոնց ընդհանուր արժեքը կազմել է գրեթե 18 մլն դրամ, եւ ձեռք են բերվել ամանորյա քաղցրավենիքի նվեր փաթեթներ: Նվեր փաթեթները գնվել են Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն, Արաբկիր, Մալաթիա-Սեբաստիա, Էրեբունի վարչական շրջանների երեխաների համար: Նվեր փաթեթի պարունակությունը, համաձայն տեխնիկական բնութագրի, հետեւյալն է. «2 ուղղանկյունաձեւ շոկոլադե սալիկ, 1 տուփ կարամել՝ սառնաշաքարային՝ ամանորյա թեմատիկ պատկերով, 3 մրգային կարամել ձողիկի վրա, 1 տուփ թխվածքաբլիթ՝ փխրուն կամ բիսկվիթային...» եւ նմանատիպ այլ քաղցրավենիքներ: Պարունակությունից հասկանում ենք, որ սրանք մեզ դեռ նախորդ դարից հայտնի «կուլոկներն» են: Այսինքն՝ հին ու բարի ժամանակներից նույն պարունակությամբ քաղցրավենիքի փաթեթներն արժեցել են 18 մլն դրամ: Տեղեկացնենք, որ մանկական՝ «ձմեռ պապի տոպրակները» սովորաբար էժանագին քաղցրավենիք են պարունակում, որոնք չեն փոխվի նաեւ այս տարի:



ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՏԱՎՈՐԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Է ԱՐԵԼ

ՆԱԽԿԻՆ ՊԱՏՎԱՄԱՎՈՐԻ ԵՂԲՈՐ ԿԱԼԱՆՔԸ ԵՐԿԱՐԱԶԳՎԵՑ

«ՄԱՍԿԱԾՎԻԼԻՆ ԲԱՆՏԻՑ ԴՈՒՐՍ ՉԻ ՔԱ». ԿԱԽԱ ԿԱԼԱԶԵ

Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին չի կարողանա դուրս գալ բանտից, նույնիսկ եթե նրան ներում շնորհի ներկայիս նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, քանի որ Սաակաշվիլիի դեմ այլ քրեական գործեր են հարուցվել: Այս մասին, ՏԱՄՍ-ի փոխանցմամբ, «Իմեդի» հեռուստաալիքին տված հարցազրույցում ասել է իշխող «Վրացական երազանք» ժողովրդավարական Վրաստան» կուսակցության գլխավոր քարտուղար, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն:

«Որքան գիտեմ Սաակաշվիլիի դեմ այլ կարեւոր գործեր են քննվում, եւ նախագահի ներումը կորցնում է իմաստն այն տեսանկյունից, որ եթե նա (Զուրաբիշվիլին) նման որոշում կայացնի, Սաակաշվիլին չի կարողանա ազատ արձակվել, քանի որ նրա նկատմամբ այլ կարեւոր գործեր են հարուցվել», - ասել է Կալաձեն:

Սաակաշվիլին, որը ներկայում Ուկրաինայի քաղաքացի է, լքել է Վրաստանը 2013 թվականին, որից հետո նրա դեմ երկրում չորս քրեական գործ է հարուցվել: Դրանցից երկուսով նախկին նախագահը հեռակա կարգով դատապարտվել է երեք տարվա եւ լրացուցիչ վեց տարվա ազատազրկման:

ԼԱՎՐՈՎԸ ԿԳԼԽԱՎՈՐԻ ՈՒՒՄԱԿԱՆ ՊԱՏՎՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բրազիլիայում նոյեմբերի 18-19-ին կայանալիք Մեծ քսանյակի (G20) գագաթնաժողովում ռուսական պատվիրակությունը կգլխավորի ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը: միջոցառման շրջանակներում նա մի շարք հանդիպումներ է պլանավորել: Այս մասին ճեպագրույցում հայտնել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

Նա նշել է, որ Լավրովը ելույթ կունենա լիազումար նիստում եւ մի շարք երկկողմ հանդիպումներ կանցկացնի:

Զախարովան նշել է, որ առաջնորդների հանդիպումը կբացվի սովի եւ աղքատության դեմ պայքարի գլոբալ դաշինքի մեկնարկով:

ԹՐԱՄՓԸ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՐՑՈՎ ՀԱՏՈՒԿ ԲԱՆԱԳՆԱՑ ԿՆՇԱՆԱԿ

ԱՄՆ ընտրված նախագահ Դոնալդ Թրամփը շուտով Ուկրաինայի հարցով հատուկ բանագնաց կնշանակի, որը բանակցություններ կվարի հակամարտությունը դադարեցնելու համար:

Այս մասին հայտնում է Fox News-ը՝ հղում անելով իր աղբյուրներին:

«Դուք կտեսնեք բարձրաստիճան հատուկ բանագնացին, ով վայելում է մեծ հեղինակություն, ում հանձնարարված է լինելու Ուկրաինայում հասնել խաղաղ կարգավորման», - նշել է հեռուստաալիքի աղբյուրներից մեկը:

Ըստ աղբյուրի՝ հատուկ բանագնացը շուտով կնշանակվի:

Իշխանության յուրացման գործով կալանավորված ԱԺ նախկին ղազաձամվորի եղբոր կալանքը դասարանը 1 ամսով երկարաձգել է: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ դասարանը նախաձեռնական մարմնին հայտնել է, որ հիմնավոր կալանքը թույլ է, եւ հիմնավորման համար ուժեղ հիմքեր են դրված:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը մեկը մյուսի հետեւից երկարեցնում է իշխանության յուրացման գործով կալանավորվածների կալանքի ժամկետը, բայց աշխատանքի արդյունավետությունը չի երեւում:

Դատարանը 2 ամսով երկարեցրել է արցախցի Արմեն Մազականյանի կալանքի ժամկետը:

Փաստաբան Ռոման Երիցյանը «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեց, որ դատարանը հայցը մասնակի է բավարարել ու թույլ է տվել, որ միայն մերձավոր հարազատները տեսակցեն Արմեն Մազականյանին: Մյուսների համար տեսակցությունները փակ են:

Օրեր առաջ հայտնել էինք. Նոյեմբերի 12-ին ԱԺ նախկին պատգամավոր Ռուստամ Գասպարյանի եղբոր՝ Սերոբ Գասպարյանի կալանքի ժամկետի հարցն է քննվելու դատարանում: Նախաքննական



մարմինը դիմել է դատարան՝ դարձյալ կալանքի ժամկետը երկարեցնելու համար: Մտում է՝ դատարանը որոշում կայացնի. կամ նրա կալանքի ժամկետը երկարեցնում է, կամ ազատ արձակում ԱԱԾ մեկուսարանից: Հիշեցնենք, որ նրանք մեղադրվում են մի խումբ անձանց կողմից, նախնական

համաձայնությամբ, իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու համար: Քրեական հետապնդում էր հարուցվել 7 անձի նկատմամբ: Նրանցից 3-ը կալանավորվել են, իսկ 4-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: ԶՆՍՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ ՖՐԱՆՍԻԱՆ ԱՆՊԱՏԱՄԻԱՆ ՉԻ ԹՈՂՆԻ ԱԳՐԲԵՋԱՆԻ ՀԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԸ

Ֆրանսիայի՝ Էկոլոգիական անցման հարցերով նախարար Անյես Պանիե-Ռյունաշեն երկրի խորհրդարանում ունեցած ելույթի ընթացքում կտրուկ է արձագանքել Բաքվում ընթացող COP 29 համաժողովի բացման արարողության ժամանակ Ֆրանսիայի եւ Եվրոպայի վերաբերյալ Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևի հնչեցրած որակումներին: Նա նշել է, որ Ֆրանսիան անպատասխան չի թողնի այդ հայտարարությունները:

«Ֆրանսիայի եւ Եվրոպայի դեմ նախագահ Ալիևի կատարած արտահայտություններն անընդունելի են: Անհնար է արդարացնել ուղղակի հարձակումները մեր երկրի, նրա ինստիտուտների եւ տարածքների նկատմամբ: Ադրբեյջանը սեփական շահերի համար է օգտագործում կլիմայի փոփոխության դեմ պայքարը, ինչը վայել չէ: Այդ հարձակումները CCNUCC-ի (Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի կողմերի համաժողով) վարքի կողմնակի կրպակառույթն իսպառնում են: Դրանք անպատասխան չեն մնա: Զավեշտալի է նաեւ, որ ռեպրեսիվ եւ ազատության դեմ հանդես եկող Ադրբեյջանի վարչակարգը մարդու իրավունքների վերաբերյալ դասեր է տալիս», - հայտարարել է Անյես Պանիե-Ռյունաշեն:

Նախարարն անընդունելի է համարում նաեւ հանաժող վառելիքի տեսակների նկատմամբ Ադրբեյջանի աջակցության արտահայտություններն այն դեպքում, երբ Ֆրանսիական եւ Եվրոպական դիվանագիտությունը COP 28-ում հասել է հանաժող վառելիքի տեսակների օգտագործումից աստիճանաբար հրաժարվելու վերաբեր-



յալ համընդհանուր համաձայնության ձեռքբերման: «Դա արժանի չէ COP-ում նախագահությանը: Ցանկանում եմ երախտագիտություն հայտնել Բրազիլիային եւ Մեծ Բրիտանիային, որոնք պարտավորվել են վերանայել ջերմոցային գազերի արտատեսակների նվազեցման իրենց թիրախները՝ դարձնելով դրանք ավելի հավակնոտ: Կլիմայի փոփոխության դեմ արդյունավետ պայքարելու համար միջազգային հանրությունը պահանջում է հենց նման դրական դիմադրական, այլ ոչ թե ցածրակարգ հարձակումներ», - ընդգծել է Անյես Պանիե-Ռյունաշեն:

տակներին՝ իրացնելու Փարիզյան համաձայնագրի (2015 թվականի - խմբագր.) դրույթները, որոնք պաշտպանում ենք ստորագրելուց 10 տարի անց», - իր խոսքը եզրափակել է Անյես Պանիե-Ռյունաշեն:

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԲԵՌՈՒ ՈՐԳԻՆ ԴՈՒՐՍ Է ԵԿԵԼ ԲՊ-ԻՑ

Գյումրու քաղաքապետի թեկնածուի քեռու որդին՝ Վարուժան Խոջումյանը, դուրս է եկել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից:

«Չեմ ուզում իմ անձի հետ կապված որեւէ թեմա վատ անդրադարձնալ ԲՊ-ի եւ ԱԺ պատգամավոր Կարեն Սարուխանյանի վարկանիշի վրա, քանզի քաջ գիտակցում եմ առաջիկայում սպասվող ՏԻՄ ընտրությունների կարեւորությունը եւ գիտեմ նաեւ, որ որոշ շահագրգիռ անձիք հենց այդ նպատակով են շարունակելու շահարկումներ անել», - գրել է նա:



ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ հաղագրել համար՝ անհրաժեշտ գանկացող անձ հաշվառվելու համար:

Լիլիա Հարությունյան (37 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող այն քաղաքացիները, ովքեր ցանկանում են երեխա որդեգրել, դիմում են իրենց բնակության վայրի մարզպետարան (Երեւանի քաղաքապետարան)՝ ներկայացնելով՝

- 1) անձը հաստատող փաստաթուղթ,
- 2) բնակարանային պայմանների մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,
- 3) ընտանիքի կազմի մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,
- 4) զբաղեցրած պաշտոնի, աշխատավարձի եւ այլ եկամուտների մասին տեղեկանք,
- 5) անձի պատշաճ վարքագծի մասին անձնական երաշխավորություն՝ տրված կազմակերպության կամ անկախ երեք անձանց կողմից,
- 6) բժշկական փաստաթուղթ՝ այն մասին, որ երեխա որդեգրել ցանկացող անձը հիվանդ չէ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 5-ի N 517-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որեւէ մեկով,
- 7) ամուսնության վկայականի պատճենը (եթե ամուսնացած է),
- 8) երեխայի ամուսիններից մեկի կողմից որդեգրման դեպքում մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ամուսինները դադարեցրել են ամուսնական հարաբերությունները, մեկ տարվանից ավելի համատեղ չեն ապրում, եւ մյուս ամուսնու բնակության վայրն անհայտ է,
- 9) տեղեկանք որդեգրման պահին մարդու դեմ ուղղված կամ հասարակական կարգի եւ բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն չունենալու մասին:


ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՎՈՒՐԳ». Եթե որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացի ունի նախապես ընտրած որդեգրման ենթակա երեխա, որի կապակցությամբ առկա է ծնողների գրավոր համաձայնությունը, ապա նա դրա մասին նշում է իր դիմումի մեջ:

ՀԱՍՏԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ինչպես է կարելի է մաքրել անձի վարկային դասնությունը:

Տիգրան Սանուկյան (38 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ վարկային տեղեկատվությունը կամ այսպես կոչված «վարկային պատմությունը» վարկառուի վերաբերյալ վարկային տեղեկատվությունն է, որը բնութագրում է վերջինիս կողմից ստանձնած վարկային պարտավորությունների մասով պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ:

Գործնականում «վատ վարկային պատմությունը մաքրել» նշանակում է ընթացիկ վարկային գեկույցներում չունենալ խնդրահարույց (ժամկետանց կամ սուբյեկտիվ չափանիշներով դասակարգված) վարկեր: Վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային գեկույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային գեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՎՈՒՐԳ». Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է: («Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ ենթակետ):

ԼՈՒՐ ԿԱՐԴ

Լուսանկարը՝ համացանցից



Երեկ ամփոփվեց, որ շախմատի Եվրոպայի անհատական առաջնությունում Հայաստանը ներկայացնող շախմատիստներից Ռոբերտ Հովհաննիսյանը առաջատարին զիջում է կես միավորով: Հովհաննիսյանը Եվրոպայի անհատական առաջնությունում երկրորդ տեղում է գտնվում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել



«Հայկոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	0 - 4 + 8 + 12	Արարատ	0 + 3 +17 + 19
Կոտայքի լեռներ	- 1 - 5 + 7 + 11	Արմավիր	- 1 + 2 +17 + 19
Կոտայքի նախալեռներ	0 + 2 +13 + 15	Վայոց ձորի լեռներ	- 2 - 5 + 9 + 11
Գեղարքունիք	0 - 5 + 6 + 11	Վայոց ձորի նախալեռներ	- 1 + 2 +17 + 19
Լոռի	- 1 - 5 +10 + 13	Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +16 + 19
Տավուշ	- 2 + 3 +12 + 15	Սյունիքի նախալեռներ	0 - 2 + 9 + 12
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 7 + 11	ԼՂՀ	0 - 4 + 9 + 13
Արագածոտնի նախալեռներ	- 1 + 3 +11 + 15	Երեւան	+ 6 + 8 +16 + 18

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 14.11.2024
Տպաքանակ՝ 3968

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՍԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը: «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: